Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) վարույթների և իրավական ապահովման վարչությունում փորձագետ (այսուհետ՝ Փորձագետ) ներգրավելու մասին

1. Ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը.

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1) համապատասխան լիազորագրով Հանձնաժողովի շահերի պաշտպանությունը համապատասխան դատարաններում և պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններում,

2) Հանձնաժողովի շահերը պաշտպանելու նպատակով՝ հայցադիմումների (դիմումների), պահանջների նախապատրաստական, ինչպես նաև ընդդեմ Հանձնաժողովի ներկայացված հայցադիմումների (դիմումների) վերաբերյալ պատասխանների՝ Հայաստանի Հանրապետության դատարաններ ներկայացնելու աշխատանքներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատարանների վճիռների (որոշումների) դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների ներկայացման համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքներ,

3) Հանձնաժողովի այլ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ Հանձնաժողովի շահերի պաշտպանության համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման նպատակով հարցումների կատարում,

4) Հանձնաժողովի և կառուցվածքային ստորաբաժանումների իրավական աջակցության աշխատանքներ:

2. Փորձագետ ներգրավելու ժամկետը. մինչև մեկ տարի:

Փորձագետի աշխատավարձը կազմում է 322 816 (երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ:

3. Փորձագետի պարտականությունները.

1) բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները,

3) պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) պահպանել անձնական տվյալների պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի պահանջները,

6) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Փորձագետներին ներկայացվող պահանջները.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,
2) բարձրագույն կրթություն իրավագիտություն (042) մասնագիտությամբ (համաձայն՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման),
3) հանրային ծառայության կամ մասնագիտական աշխատանքային կամ իրավունքի բնագավառի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ,
4) գրավոր և բանավոր հայերենի գերազանց իմացություն,
5) կոռուպցիայի կանխարգելման ոլորտում աշխատելու մեծ մոտիվացվածություն,
6) փաստաթղթերի մշակման, տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հմտություններ,
7) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

5. Դիմումների ընդունման վերջնաժամկետը. 2025 թվականի օգոստոսի 5-ը ներառյալ:

6. Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15:

7. **Չի թույլատրվում պայմանագիր կնքել**, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

9. Դիմողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով **(դիմումի ձևը կցվում է),**

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր),
- աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթեր),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենները բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափի,
- անձնագիր կամ նույնականացման քարտ,
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք,
- ինքնակենսագրական,
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին **(հայտարարության ձևը կցվում է)**:

10. **Փաստաթղթերը ընդունվում են** առձեռն և էլեկտրոնային եղանակով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **hr.cpcarmenia@gmail.com** էլեկտրոնային փոստի միջոցով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել 012-77-77-24 հեռախոսահամարով: